



## 28. ՄԱԽՈԽԻ ՀԵՐԻԱԹԸ

Ժամանակով մի մարդ կար, դրան ուներ իրեք աղջիկ՝ իրեքն է, հասած: Օրվա մեկ օրը էդ մարդը վե կացավ, ուզում էր էթաքաղաք աղջկերանց հմար բան առնելու: Վե կալավ աղջկերանցը հարցրեց, ասեց.— Ի՞նչ եք ուզում, որ քաղաքիցը բերեմ:

— Մինթանա բե՛ ինձ հմար, ոննաման բե՛, — ասեց մենծը:

Միջնեկ աղջիկն էլ ասեց.— Ինձ հմար աղլովս բե՛, յազմա բե՛:

Պուճուր աղջիկն ասեց.— Ա՛յ հեր, ես զադ չե՛մ ուզում քեզանից, թե բերում ես, մի մարգարտե շապիկ բե՛ ինձ հմար:

Հերն ասեց.— Ա՛յ որդի, ո՞րդիան գտնեմ մարգարտե շապիկ:

— Դե՛, — ասեց, — ա՛յ հեր, էդ ա իմ ուզածը, կընի՛ կրերես, շիլնի՛ զադ չե՛մ ուզում քեզանից:

Էդ մարդը վե կացավ գնաց քաղաք, ինչ որ էն էրկու աղջկերանց ուզածն էր՝ առավ, էդ պուճուր աղջկա ուզածը ո՞րդի ման էկավ՝ շգտավ:

Շատ ման գալուց եղը, մի մարդ ընդիան ձեն տվեց.— Ա՛յ մարդ, — ասեց, — ընդի՛ ես ման գալի ըդքան քաղաքի մեջը:

Ասեց.— Ի՞նչ անեմ, աղպեր շա՛ն, իրեք աղջիկ ունեմ. ինձ, գալիս ի քաղաքը, հարցրի. «Ի՞նչ եք ուզում ձեզ հմար բերեմ», մեկը մինթանա ուզեց, մեկը՝ աղլովս, յազմա, դրանց ուզածները գտել եմ, առել, էն պուճուրը մարգարտե շապիկ ուզեց, շեմ կարում գտնի:

Էդ մարդն ասեց.— Իմ կշտին կա մարգարտե շապիկ։ Ա՛րի  
տավ քեզ, — ասեց։

Գնաց, տվեց իրան, ասեց, — Ես շապիկը տալիս եմ քեզ էն  
պայմանով, որ շապիկի տիրոնը դամ տանեմ։

Հերն ասեց.— Ե՞ր դաս տանես։

Ասեց.— Ո՛ր օրը որ ձեր տանը մախոխ էփեցին, էն օրը կդամ  
կտանեմ։

Էդ մարդը մտածեց, թե. — Ի՞նչ կա, թամբահ կանեմ կնկանս՝  
մախոխ չի էփի, ես էս շապիկը առնեմ, էթամ։

Վե կալավ մարգարտե շապիկը, եղ դառավ տում, Տարավ  
տուն՝ ամերի ուղածը տվեց իրան, մարգարտե շապիկն էլ հանեց  
տվեց պուճուր աղջկանը։

Ասեց.— Կնի՛կ, քեզ մի բան եմ թամբահ անում, որ մեր տա-  
նը անումը մախոխ չէփովի։

Կնիկն ասեց.— Խի՛, ա՛յ մարդ, խի՛ շպտի էփովի։

— Բարա հմար որ, — ասեց, — Էդ շապիկ տվողը ասում էր,  
ո՛ր օրը մախոխ էփեք, պտի գամ՝ էդ շապիկի տիրոնը տանեմ։

Կնիկն ասեց.— Ա՛յ մարդ, խի՛ եմ էփում, ո՛ր ըտենց ա, չե՛նք  
էփի։

Կնիկը կանշեց աղջկերանցը ասեց.— Անումը մախոխ չէփեք  
մեր տանը։

Էկավ երկար ժամանակ անց կացավ, մի օր ըդոնք լվասկ ին  
անում, լվասկից պրծան, օրն էլ շարթապաս էր, մերն ասեց մենձ  
աղջկանը. — Ա՛յ որդի, զնա՛ մի բան էփա, ուտենք։

Աղջիկը զնաց թթուն լցրեց պղնձի մեջը, սկսեց մախոխ էփիլ՝  
մտիցն ընկել էր։

Սկսեց էփիլը՝ Էդ մարդը տանից մտավ նեքսև, ասեց.— Ա՛յ  
մարդ, իմ հախլուն տո՛ւր։

Մարդն ասեց.— Տե՛ր եմ պայմանիս, պտի տա՛մ։

Թերեց մենձ աղջկանը, շորերը հագցրեց ու տվեց էդ մարդին,  
Էդ մարդը վե կալավ էդ աղջկանն ու զնաց։ Տարավ հասցրեց իրա  
ամարտիները։

Աղջիկը տեհավ էդ ամարտիները, ասեց.— Զհաննամը գյո՛ռը,  
որ հորից-մորից հեռու եմ, չէ՛ էս թավուր ամարտիների միշին  
կնստեմ։

Աղջկանը տարավ վիրե, եռեսուն իննը օթախ իրար միշից բաց  
արեց, վրա քառասունին աղջկանը տարավ ներսւ:

Աղջիկը տեհավ՝ բերանը բաց մնաց.—Հե՛յ վա՛խ,— ասեց,—  
ըսքան էլ ապրա՞նք, կարողությո՞ւն կըլնի՞ մարդի:

Քնեցին: Լիսը բացվեց, էդ մարդը բերեց քառասուն լիդր բամ-  
բակ, մի հատ անկաշ, դրեց էդ աղջկա մոտը, ասեց.—Տե՛ս, աղջի՛,  
ես էթում եմ, էս քառասուն լիդր բամբակը,— ասեց, —պտի մա-  
նես, քառասուն օրեն վրա, էս անկաշի տնքոցն էլ պտի կտրես, որ  
էկա տեսա չես արել, տեսո՞ւմ ես էն շամփուրը, կճիտեմ շամփու-  
րը, քաշ կանեմ օջորքիցը,— ասեց ու ինքը գնաց:

Էդ աղջիկը մնաց մոլորած, ի՞նչ աներ, ո՞նչ կարաց էդ բամ-  
բակը մանի, ո՞նչ էլ կարաց էդ անկաշի տնքոցը կտրի, ասեց.—  
Ա՛ստված ջան, ի՞նչ անեմ, էս ա վերջի օրն ա, որ զա, պտի ճիստի  
շամփուրը, կախ տա օջորքիցը:

Էկավ քառասուն օրը թամմեց, մարդն էկավ: Տեհավ ո՞նչ բամ-  
բակն ա մանե, ո՞նչ էլ անկաշի տնքոցն ա կտրե, վե կալավ շամ-  
փուրը՝ աղջկա բերնիցը խրեց, ոններիցը դուս էկավ, տարավ ճըխ-  
տեց օջորքը:

Էլի եղ դառավ էն մարդի տունը, ասեց.—Ա՛յ մարդ, իմ կնիկը  
տո՞ւր, էն իմ կնիկը չեր:

Մարդը բերեց միջնեկ աղջկանը տվեց էդ մարդին:

Էդ մարդը սրան էլ տարավ իրա ամարաթը, նրա պես քառա-  
սուն լիդր բամբակ տվեց մանելու, մի հատ էլ անկաշ՝ տնքոցը  
կտրելու: Սա էլ ո՞նչ բամբակը կարաց մանի, ո՞նչ անկաշի տըն-  
քոցը կարաց կտրի:

Մարդն էկավ սրան էլ ճիստեց շամփուրը, քաշ արեց օջորքիցը,  
էլի եղ դառավ էն մարդի տունը, ասեց.—Ա՛յ մարդ, իմ հախ-  
լուն, իսկական հախլուն տո՞ւր, էդ տվածներդ իմ հախլուն չեն:

Մարդը վե կացավ գնաց աղջկա մոտը.—Վե՛ կաց, — ասեց,—  
ա՛յ որդի, հմի էլ քեզ ա էկե տանելու էդ անիրավը:

Էդ աղջիկը վե կացավ, մարգարտե շապիկը հագավ տակիցը,  
շորերը հագավ, ասեց.—Ա՛յ մեր, իմ զութին բեր, իմ կատուն  
բեր:— Բերեց կատուն դրեց զութու մեջը, էդ մարդը վե կալավ ու  
գնաց: Տարավ հասցրեց իրա ամարաթը, նստեցին ընտեղ, քնեցին:  
Լիսը բացվեց, էդ մարդը բերեց քառասուն լիդր բամբակ և էդ  
անկաշը, ասեց.— էս քառասուն լիդր բամբակը տալիս եմ քեզ, քա-

ուստում օրվա վրա պտի մանես, էս անկաջի տնքոցը պտի կտրես  
մինչանք իմ գալը. ո՞ր էկա, տեսա չես արել, տե՞նում ես էն էր-  
կուսը, որ կախ եմ արե ընտեղ, թեզ էլ ըտոնց կողքիցը կախ  
կանեմ:

Թողաց էդ մարդը գնաց. էդ խեղճ կնիկը մնաց ըտեղ մոլոր-  
ված, թե.—Աստված, ես էս բառասուն լիդր բամբակը ո՞նց մա-  
նեմ բառասուն օրվա վրա:

Դշեր-ցերեկ մեկ արեց ու մանեց, տե՞հավ հնար շկա, բամ-  
բակը տեղն ու տեղն ա: Գալու օրերը մոտացել էր.—Է՛, աստ-  
ված,—ասեց,—ի՞նչ անեմ, չպրծա էս բամբակը, նստում եմ հաց  
եմ ուսում՝ եղանում եմ:

Մի պղինձ կիրակուր էփեց, թերը մինչև ուսագլները բաց  
արեց, էդ կիրակուրը քսեց թերն ու շահրեն դրեց աղաքը, մի յա-  
նիցն էլ էդ կիրակուրը լիզվով լիզում էր: Տեհավ, որ հնար շկա,

Մոտիկ բաղաք կար, թագավորի տղի բուկը ուսել էր, ինչ հնար  
անում ին՝ չեր լավանում, թագավորը շառ էր ձեն տալի. «Ո՛վ  
որ իմ տղին լավացրեց, ոսկի, երկիր ուղի՝ կտամ, թաքըլի իմ տղին  
լավացնենա: Զենն ընկավ էդ աղջկա անկաջը, աղջիկն ասեց.—  
Ցավա՛շ, ես էլ էթամ, թամաշ անեմ, տենամ էդ ինչ թավուր հի-  
վանդ ա:

Թերը ընենց քշտած, կիրակուրը վրեն բսած վե կացավ գնաց  
թագավորի տղի աղաքին կանենց, թամաշ էր անում թագավորի  
տղին, մի յանիցն էլ հենց իմանում էր, թե շահրա էր մանում՝  
ձեռները ժաժ էր տալի, լիզոն հանում, թերը լիզում: Թագավո-  
րի տղին աշքը բաց արեց դրան տեհավ՝ ծիծաղաց. ծիծաղալու  
վախտը բուկն ուսում էր՝ բլեց. թագավորի տղին լավացավ: Խարար  
տարան թագավորին, որ մի աղջիկ քու տղին լավացրեց:

Թագավորն ասեց.— էն աղջկանը բերե՛ք տենամ:

Աղջկանը տարան թագավորի մոտը, աղջիկը գլուխ տվեց,  
կանենց:

Թագավորն ասեց.— Ա՛ղջի, ի՞նչ ես ուղում՝ տա՛մ թեզ:

Ասեց.— Զադ շեմ ուղում, մենակ բառասուն լիդր բամբակ  
ունեմ՝ տա՛ս մանելու

Թագավորն ասեց.— Գնացե՛ք սրա բամբակը բերեք, ցրվեք  
բաղաքի վրա, թող մանեն մի օրվա միջին, տան իրան:

Սաղ տարան, մի օրվա միջին մանեցին, բերին տվին էդ աղ-

չըկանը. Աղջիկը վե կալավ տարավ իրա ամարաթը, էն անկազն  
էլ քցեց իրա կատվին, կատուն կերավ, տնքոցը կտրվեց:

Քառասուն օրը թամմեց, մարդն էկավ տեհավ, որ բամբակը  
յանած ա, անկազի տնքոցը կտրված ա, գնաց կնկա ճակատը պա-  
շեց, ասեց.— Ապրես դու, կնի՛կ, նո՞ր իմացա, որ դու իմ կնիկն ես:

Նստեցին հաց ուտելու, մարդը, տեհավ, որ մի Թստան-բըլոչ  
դենն էթում ա, ասեց.— Կորի՛ դեն, մուտտառ անասուն, դու խի՛  
ես ընկե ըստեղ:

Կնիկն ասեց.— Վա՛յ, ա՛յ մարդ, դրան բան մի՛ ասի, ախար  
դա իմ մոքիրն ա:

Մարդն ասեց.— Բա որ քու մոքիրն ա, խի՛ ա էլե Թստան-  
բըլոչ:

Ասեց.— Իմ մոքոր մարդն էլ քեզ պես շար էր, ընքան բամ-  
բակ մանիլ տվեց, որ էլավ Թստան-բըլոչ:

Ասեց.— Կնի՛կ, դու է՛լ որ շատ մանես պտի ըլնես Թստան-  
բըլո՞չ:

Ասեց.— Բա ի՞նչ պտի անեմ:

Մարդն ասեց.— Որ ըտենց ա, էլ պետքը չի, մի՛ մանի:

Պառկեցին, քնեցին. լիսը բացվեց, մարդն ասեց.— Ա՛ռ էս իմ  
արարաթների բալանըքները տամ քեզ, ես էլի էթում եմ:

Թերեց քաշեց դրա աղաքի էրկու ատամը, մինը վիրինը, մեկը  
ներքինը, արծաթից ատամներ շինեց, դրեց ըտոնց տեղը, ինքը  
թողաց, գնաց:

Մարդը որ գնաց, կնիկը բալանըքները առավ, ընկավ օթախ-  
ները ման գալու. մի օթախ բաց արեց՝ տեհավ արծաթ էր կիտած,  
մի օթախ բաց արեց՝ տեհավ ոսկի էր կիտած, մի օթախ բաց արեց՝  
բոլիխանտ էր կիտած. վերջը դրա կարողության շափ ու սահ-  
ման շկար:

Մի օթախ էլ բաց արեց՝ տեհավ աղբուկ ա դուս գալի, տարավ  
ճկութը թաթխեց մեջը՝ էլավ ոսկի:

— Օ՛հ, — ասեց, — էս ի՞նչ լավ բան էր, — մազերն էլ թաթխեց  
մեջը՝ դառավ ոսկե թելեր:

Մի օթախ էլ բաց արեց՝ տեհավ սաղ արհեստավոր տղեր են  
նստած, մեկը զարգյար ա, մեկը՝ կտավ գործող, մեկը՝ խառատ,  
վերջը ամեն արհեստավոր կար ըտեղ:

Աղջիկը վե կալավ ասեց.— Տղե՛ք, դու կը ըստեղ ի՞նչ եք անում:

Ասեցին.— Էղ անիրավը մեզ բռնել ա քցե ըստեղ, հրեսի մի կողմը շամիչ ա, մի կողմը բաղամի մեջ ա, մի կողմը պնդուկ ա, ուստում ենք, իրա հմար բանում, ինքն էլ տանում ա ծախում:

Ասեց.— Ա՛յ տղեք, որ ըստիան ձեզ աղատեմ, ինձ հմար կա՞-  
ռաք ընենց մի դութի շինի, որ ո՞նչ ջուր քաշի, ո՞նչ էլ բացվի:

Տղեքն ասեցին.— Եա՛տ լավ, մեր բանն ա:

— Դե՛ որ ըտենց ա, մի ձեռք էլ ինձ հմար զառարից ընենց  
շորեր կարեք, որ աշխարքի մեջ շնարսի:

Ասեց ու գնաց: Մի օրվա միշին հա՛մ շորերը կարեցին, հա՛մ  
դութին շինեցին, թերին տվին էդ աղջկանը: Էղ աղջիկը իրա հմար  
ուտելիք էր հազրե՝ դրեց դութու մեջը, ինքն էլ մտավ դութին.—  
Դե՛, — ասեց, — էս բալանըթները ձեզ, ինչ կուզեք՝ արե՛ք, էս քոմ-  
մա կարողությունը ձե՛զ:

Ինքը մտավ դութին, դուռը նեքսեկից շինեց.— Դե՛հ, — ասեց,—  
ինձ տարեք քցեք ժողի մեջը:

Աղջկանը տարան քցեցին ծովը, իրանք էկան տուն տեղ քարու-  
թանդ արեցին ու տարան:

Էդ դութին ո՛ր քցեցին ծովը, ծովը տարավ: Տարավ հանեց մի  
թագավորանիստ բաղաք: Ըտեղ ավազի վրա բանդ էլավ դութին:

Թագավորի տղեն իրա նազիր-վեղորովը էկավ ծովի դրաղը ման  
գալու:

Տեհավ հրես մի դութի բանդ էլած, ասեց.— Նազի՛ր-վեղի՛ր,  
մի լեզվոր բերեք՝ էս զութին հանի, մալ ըլնի, դոլվաթ ըլնի՛ ձե՛զ,  
թե իսան ըլնի՝ ինձ:

Լեզվոր բերեցին, լեզվորն ընկավ ծովը, գնաց դութին բերեց:  
Դութին հանեց զրաղը. ի՞նչ հնար արեցին՝ շրացվեց: Աղջիկը նեք-  
սեկը բաց արեց, զութին բաց անելուն քիմի թագավորի տղի աշխ  
առավ աղջկանը՝ խելքը զլիսիցը թռավ:

— Հե՛յ վա՛խ, — ասեց, — ըսենց էլ սիրուն աղջիկ կըլնի՛, իմը  
կա՞ սա՛ ա, չկա՞ սա՛ ա:

Վե կալան տարան էդ աղջիկը թագավորի ամարաթը, խարար  
տարան տղի հորը:

— Աչքդ լի՛ս, տղեգ ծովիցը մի աղջիկ ա հանե:

Հերն էկավ, տեհավ, որ շատ աննման, սիրուն ա:

Տղեն ասեց.— Ա՛յ հեր, իմը կա՞ սա՛ ա, չկա՞ սա՛ ա, որ եր-  
կընքից վեր էկած լիսեղեն աղջիկ ըլնի՛ պետքը լի՛:

Թագավորը բերեց օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց, իրա տղի հետ պսակեց:

Մալրդը տանք էն մարդիցը:

Էս մարդն էկավ տեհավ ո՞նչ մալ, ո՞նչ դուվաթ, ո՞նչ կնիկ, ո՞նչ տուն ու տեղ, քար ու քանդ արած, թալանած, տարած բիւրադի:

Ասեց.— Լա՛վ, կնի՛կ, դու իմ ջանին վա՛յ տաս, տե՛ս քու գլուխը ի՞նչ կհանեմ:

Էդ մարդը սեհրբազ էր, քյանդրբազություն սարքեց: Ընկավ գեղից-գեղ, քաղաքե-քաղաք, մանգալոն, մանգալոն գնաց դուս էկավ էն քաղաքը, որտեղ որ կնիկը ընտեղ ա: Տարավ պարանը կապեց թագավորի ամարաթի աղաքին ու սկսեց հաղալ: Ընենց օյըններ էր հանում, սաղ էդ ժողովուրդը ծիծաղու թիւանում ին: Համա էդ մարդի աշքը է՛ս կնկա էրեսին էր, է՛ն կնկա էրեսին էր, իրա կնկանն էր ման գալի:

Թագավորի տղեն գնաց նեքսև, ասեց.— Ա՛յ կնիկ, դու էլ դուս արի, տես՝ ի՞նչ թավուր քյանդրբազ ա:

Կնիկն ասեց.— Ես չեմ սիրում քյանդրբազ հաղալը, ես շատ եմ տեհեւ:

Մարդը շատ զռռեց, կնիկը դուս էկավ բալկոնը թամաշ արեց էդ քյանդրբազին, տեհավ, որ իրա մարդն ա: Էդ քյանդրբազը ընենց օյըններ հանեց, էդ կնիկը բիրդան ծիծաղաց, որ ծիծաղաց մարդի աշքն առավ էրծաթե ատամներին, ճանանչեց, որ իրա կնիկն ա: Էն հրոպակեին պարանիցը վեր էկավ, քանդ ու քար արեց, տարավ պահեց ըտոնք՝ էկավ մուտին ընկավ, ընենց մի զիր արեց, որ իսանները բիրադի քնեցին, շները քնեցին, հավերը քնեցին, վերջը ո՞նչ մի անսուն շմնաց զարթուն, մնացին էդ կնիկն ու մարդը զարթուն, նդո ընենց արեց, որ քաղաքի մեջ ո՞նչ մի ճրագ վառ շմնաց, բիրադի հանգավի:

Էդ մարդը էկավ էդ կնկա մոտը, ասեց.— Հըմի էլ ո՞ւր պտի փախնես իմ ձեռիցը:

Էդ կնիկը գնաց իրա մարդի միսը ճմկըթեց՝ լզարթնեց, ի՞նչ արեց՝ լզարթնեց, ուզեցավ ճրագ վառի՝ լվառվեց, շիվարեց, մնաց:

Մարդն ասեց.— Արի՛, արի՛, քու վերջի օրն ա, զուր դե՛ս ու դե՛ն մի ընկնի: Արի՛, էն մենծ պղինձը բե՛:

Աղջիկը ճարը կտրած գնաց պղինձը վե կալավ, բերեց:

Ասեց.—Դի՛ օշաղի վրա, չուրը լցրա՛, տակը վառա՛, որ քեզ  
սաղ-սաղ պտի կոխեմ պղինձը, խաշեմ:

Ասեց.—Դու քու աստոծը, էլ ճար չոմեմ, ի՞նչ ուզում ես՝  
արա՛: Մննակ թող մի էթամ դրսե, վերշի աղոթքս անեմ, գա՛մ:

Ասեց.—Գնա՛, ո՛գ ուզում ես, իմ ձեռիցն էլ չես աղատվի:

Աղջիկը նիլավ կտրուրը, տեհավ հեռու մի ճրագի լիս ա էրե-  
վում, սաղ քաղաքը մութը կոխել ա:

Վեր էկավ կտրիցն ու վաղեց դպա էդ ճրագի լիսը:

Գնաց տեհավ, որ հրես մի զեկի կնիկ նստել ա, աշու ծիծը  
ձախ ուսն ա քցե, ձախու ծիծը աշ ուսն ա քցե, մի փութ էլ արճիճ  
քցել ա բերանը՝ ժամում ա, հետն էլ հաց ա թխում: Աղջիկը հա-  
սավ, քամակիցը ծծերը առավ բերանը՝ ծծեց:

Պառավը եղ թամաշ արեց, տեհավ մի հողածին, ասեց.—Ա՛յ  
աղջի, զուշն իրա թեռվը, օձն իրա պորտովը ըստեղարինք շի էկե,  
գու ո՞նց ես էկե:

Ասեց.—Նա՛նի, վիրե՛ աստված, ներքե՛ դու, ճարս մնաց քեզ.  
մարդո ըսենց անիրավ ա, պղինձը ջուր ա լցրե, էփացրե, որ ինձ  
ճխտի մեշը, էփի:

— Է՛, — ասեց, — էն անիրավը հլա կա՛, էն իմ աղպերն ա.  
ա՛յ որդի, — ասեց, — ի՞նչ կտաս, որ քեզ աղատեմ էդ անիրավիցը:

Ասեց.—Ի՞նչ որ լեզուդ պըտըտի՛ կտա՛մ:

Ասեց.—Էդ փորինդ կտա՞ս ինձ:

Ասեց.—Աստված միջնորդ ըլնի, գու ինձ աղատես էս անիրա-  
վիցը, տղա էլ ըլնի՝ տա՛մ քեզ, աղջիկն էլ ըլնի՝ տա՛մ քեզ:

Ասեց.—Դե՛, որդի, զնա՛, նա զիր ա արե քցե ժամի կտուրը՝  
ո՞նչ քնողը զարթնի, ո՞նչ շուն հաշա, ո՞նչ էլ ճրագը վառվի, զնա՛  
ժամի կտուրը, ման արի՛, էդ թուխտը քթի բե ներքե ճղա՛ լիսը  
կրացվի, մարդիքը կզարթնեն, շները կհաշան:

Էդ աղջիկը էթում ա նիլնում ժամի կտուրը, ձեռները ափլը-  
փորելոն զիրը գտնում ա, վեր ա բերում, ճղում ա: Որ ճղում ա՝  
լիսը բացվում ա, մարդիկ վեր են կենում, աքլորները կանչում են,  
շները հաջում: Էդ կնիկը վազում ա տուն, տենում ա, որ իրա մար-  
դը զարթնել ա, էն մարդն էլ չկա:

Մարդն ասում ա. — Ա՛յ կնիկ, էդ ի՞նչ ա էլե քեզ:

— Քու տունը չբանդվի՛, վե կա՛ց, էթանք տե՛ս:

Էթում ա տենում, որ պղինձը լիքը ջուր էփում ա:

Թե.— էս ո՞վ ա արե:

Թե.— էրեկվա հաղող<sup>1</sup> փայլեանը:

Ասում ա.— Բա ի՞նչ էլավ:

Ասում ա.— Թողաց, փախավ, հլա ոններդ բաց արա տես-  
տե՛ս, ընթամ ճմկթել եմ, որ յարա ա էլե, չէիր կարթնում. ո՞նչ  
շուն էր հաշում, ո՞նչ աքլոր էր կանչում, ո՞նչ էլ ճրագ էր վասվում:  
Նիլլա կտուրը, տեհա, որ հեռվանց մի ճրագի լիս ա էրկում, վեր  
էկա, վազեցի էդ լըսին, տեհա մի դմի կնիկ, ծծերը ծծեցի, աղա-  
շեցի, որ ազատի ինձ, նա ինձ ասեց, որ էդ մարդը գիր ա արել,  
քեր ժամի կտուրը, որ ո՞նչ մեկը շղարթնի, լիսն էլ շրացվի: Գնա-  
ցի ժամի կտրիցը գիրը վե բերեցի, լիսը բացվեց, էկա տուն՝ դու-  
զարթնել իր:

— Բա էն մարդն ի՞նչ էլավ,— հարցրեց թագավորի տղեն:

— Որ լիսը բացվեց, ես տեսա, որ փախավ:

Թագավորի տղեն հրամայեց՝ քաղաքի լորս զրադը փակեցին,  
էդ փայլեանին բռնեցին. բերին ճխտեցին պղինձը, խաշեցին:

Տարին անցկացավ, էկավ էդ թագավորին մի տղա էլավ, էդ  
տղեն մենացավ, դառավ էրկու տարեկան, մերը կուռը բռնեց,  
տարավ էն դմի կնկանը, ասեց.— Ա՛ռ, ես իմ խոսքը կատարեցի:

Պառավն ասեց.— Տա՛ր, քեզ փեշքաշ, դու որ քու խոստումը  
կատարեցիր, քեզ փեշքաշ ըլնի: Վե կա՛լ քու էրեխեն, դնա՛:

Առավ էկավ տուն: Դրկեցին էդ աղջկա հորնումորը բերել տվին,  
իրար հետ ուրախ-զվարթ ապրեցին մինչանք իրանց մահը:

Դրանք հասան իրանց մուրագին, դուք էլ հասնեք ձեր մու-  
րագին:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսո-  
ղին, մինն էլ՝ անկաշ դնողին:

<sup>1</sup> Խաղացող (Ս. Բ.):

